ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/5.1.1-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. մայիսի 20-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1** ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ 2025 թվականի մարտի 14-ին կայացած նիստի N2/5.1.1-25 արձանագրությամբ՝ **«Աութսորս» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակի ներկայացման վերաբերյալ:

Նշվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը՝ **«Աութսորս» ՍՊԸ**-ն, ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը, այն է՝

• հանել ֆինանսական նախահաշվի 2.5-.2.7 կետերը՝ հաշվի առնելով, որ դրանք հրավերով չնախատեսված լրացուցիչ իրականացման գործողություններ են, ինչպես նաև նվազեցնել աշխատավարձի համար նախատեսված գումարը, միաժամանակ, ԱԱՀ արժեքը չներառել ֆինանսական նախահաշվի տողերում, այն նշել առանձին տողով, ինչպես նաև նվազեցված և հանված կետերի համար նախատեսված գումարները ուղղել միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ ծառայությունների մատուցմանը,

Հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել է Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակը (առկա է էլեկտրոնային տարբերակը):

Հանձնաժողովի կողմից կայացավ քննարկում «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության վերաբերյալ:

Հանձնաժողովն ուշադրություն դարձրեց այն հանգամանքին, որ 2.5-2.7 կետերով նախատեսված միջոցառումները հանվել են, իսկ գումարը համապատասխանաբար ուղղվել է այլ միջոցառումների իրականացման վրա: Սակայն Հանձնաժողովի անդամները, հավելյալ քննարկումների արդյունքում, որոշեցին «Աութսորս» ՍՊԸ-ին առաջարկել 2.5-.27 կետերով նախատեսված բյուջեն նվազեցնել ընդհանուր միջոցառման համար նախատեսված բյուջեից՝ հաշվի առնելով, որ հրավերով նշված կետերով պահանջ ի սկզբանե չի նախատեսվել:

Առաջարկվեց նաև ընդգրկված մասնագետների աշխատավարձը բաշխել ոչ թե ըստ ամիսների, այլ նախատեսել աշխատավարձ Միջոցառման կազմակերպման շրջանակներում իրականացված աշխատանքների համար, որի վճարումը կիրականացվի Միջոցառման ավարտից հետո:

Միաժամանակ, որոշվեց Ընկերությանն առաջարկել պայմանագիրը կնքել միջոցառման ժամկետների հստակեցումից հետո՝ հաշվի առնելով, որ Աշխատանքային պլանը Պայմանագրի անբաժանելի մասն է կազմում, և վճարումներն իրականացվում են՝ հաշվի առնելով աշխատանքային պլանով միջոցառումների իրականացման համար նախատեսված ժամանակացույցը:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1** ենթամիջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

• **«Աութսորս» ՍՊԸ-ի** հետ՝ **75,400,000** (յոթանասունհինգ միլիոն չորս հարյուր հազար) (այդ թվում՝ 12,566,667 (տասներկու միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ ԱԱՀ) ՀՀ դրամ գումարի չափով, Կոմիտեի կողմից Միջոցառման անցկացման ժամկետների հստակեցումից, Հանձնաժողովի առաջարկների իրականացումն ապահովելու նպատակով Կազմակերպության հետ համագործակցությամբ Նախահաշվում և Պայմանագրի անբաժանելի մասը կազմող նախահաշվում համապատասխան փոփոխությունների կատարումից և մյուս հավելվածներում համապատասխան տեղեկատվությունը լրացնելուց հետո:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Լ.Բասմաջյան - _____

Ա.Ոսկանյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____